ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www. artik.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2025 թվականի N 107-Ա

<<ՄՈՒՇ ՄԱՐԿԵՏ >> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ սննդամթերքների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրերով, 2024թվականի դեկտեմբերի 23-ի ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1 ծածկագրով, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ 25/1-1 և 2024թվականի դեկտեմբերի 27-ի ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրերով, 18 և 12 ինչպես նաև ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրերով, 4-րդ չափաբաժնով նախատեսված «Մուշ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պայմանագրի հավելված N 1 տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով պետք է մատակարարեր /հալվա, սպիտակաձավար և օղաբլիթ/ սննդամթերքները, սակայն 2025 թվականի հունվարի 13-ին Արթիկի համայնքապետարան <<Մուշ Մարկետ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներկայացրել է գրություն, որով հրաժարվել է վերը նշված սննդամթերքները մատակարարել ըստ տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին:
2025 թվականի հունվարի 16-ին Արթիկ համայնքի ղեկավարի որոշմամբ «Մուշ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված պայմանագիրը լուծվել է մասնակի և ամբողջովին և մասնակցին՝ «Մուշ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պայմանագրի լուծման մասին ծանուցվել է, ինչպես նաև տուժանքների ձևով պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները փոխանցել Արթիկի համայնքապետարանի բյուջեի հաշվին և պայմանագրի որակավորման և ապահովման պահանջագրերի գումարները բնօրինակներով ուղարկվել են «Մուշ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպասարկող բանկին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությանը:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը այն մասին, որ ընկերության կողմից չեն փոխանցվել պայմանգրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունից ստացված գրությունը հետևյալ ձևակերպումով <<Պահանջագիրը չի կարող կատարվել բանկի կողմից՝ վճարողի հաշվին դրամական միջոցների անբավարարության պատճառով>>:

Ինչպես նաև 2024 թվականին դեկտեմբերի 23-ին, 27-ին և 29-ին կնքվել են պայմանագրեր սննդամթերքի ձեռքբերման մատակարարման հետևյալ ծածկագրերով ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/3, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/4, որով նախատեսված <<Մուշ Մարկետ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պայմանագրի հավելված N 1 տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով պետք է մատակարարեր /ձու, բուլկի, հրուշակեղեն/տեղական վաֆլի/ թխվածքաբլիթ պրյանիկ, վարսակի փաթիլներ, դեղին ոլոռ, բլղուր, կարմիր ոսպ, շաքարի փոշի, կոնֆետ իրիս, շոկոլադե գնդիկներ /միջուկը շոկոլադապատված կարամելով/շոկոլադե սալիկ, թռչնի կաթ, խուրմա, սոդա, աղ, շոկոլադե գնդիկներ, աղացած սև պղպեղ, խմորիչ, համեմունքներ, եգիպտացորենի պահածո, կեքս, թխվածքաբլիթ օղաբլիթ, բուլկի, կիտրոն, դդմիկ, յուղ, բուսայուղ, յոգուրտ, կարագ շոկոլադային/սննդամթերքներ:Սակայն «Մուշ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հրաժարվել է մատակարարել սննդամթերքները, ինչպես նաև պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները: «Մուշ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Արթիկի համայնքապետարան 2025թվականի հունվարի 22-ին գրություն է ներկայացրել, որ չի պատրաստվում տուժանքի ձևով իր կողմից հաստատված պայմանագրերի և որակավորման ապահովումների գումարը փոխանցել Արթիկի համայնքապետարանի բյուջեի հաշվին՝ խախտելով ամբողջովին պայմանագրի դրույթները:

<<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ենթակետով, բացառությամբ սույն օրենքի23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդորում գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Միևնույն ժամանակ ընթացակարգի հրավերի համաձայն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը/ այսուհետ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությունը/ մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ուսումնասիրելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ենթակետի պահանջները և հիմք ընդունելով ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1 ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1,ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/3, ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրերով պայմանագրի կատարման պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված զեկուցագրով <<Մուշ Մարկետ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացրած փաստը:

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը:
2. <<Մուշ Մարկետ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /ՀՎՀՀ 05550114/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Արթիկ քաղաք Բաղրամյան 33/2:

3. <<Մուշ Մարկետ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղղարկել Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

անվանում	ՀՎՀՀ	գործունեության հասցե	խախտվել է գնման գործընթացը	որպես ընտված մասնակից	համայնքի ղեկավարի որոշումը
<<Մուշ Մարկետ>>ՍՊԸ	05550114	ՀՀ Շիրակի մարզ ք.Արթիկ Բաղրամյան 33/2	Խախտվել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած բոլոր պարտավորությունները	Հրաժարվել է պայմանագրով ստանձնած պարտավորություններից	107-Ա

Ներառյալ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կնքման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2025 թվական հունվարի 24